ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-005-17.08.2021-ՏՀ-011/0) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի ամբողջ տեքստում	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի ամբողջ տեքստում կիրառվող «Հայաստանի Հանրապետության կառավարություն» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «Կառավարություն» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ նախատեսված ձեւակերպումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված մի շարք հասկացություններ խնդրահարույց են Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, այն է՝ «Հիմնական իրավունքները եւ	Ընդունվել է մասամբ: Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «Գնահատում՝ գնահատման օբյեկտի արժեքի որոշմանը նպատակաուղղված սույն	Ընդունվել է մասամբ:

			ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը եւ ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների եւ ազատությունների կրողները եւ հասցեատերերն ի վիճակի լինեն դրսեւորելու համապատասխան վարքագիծ»: Օրինակ՝ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Գնահատում՝ արժեքի որոշմանը նպատակաուղղված սույն օրենքով, գնահատման ստանդարտներով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված գնահատման գործողությունների ամբողջությունն է.»: Տվյալ պարագայում «գնահատում» հասկացությունը սահմանելիս, կարծում ենք, որ անհրաժեշտ է բացահայտել՝ ինչ արժեքի որոշմանն է ուղղված տվյալ գործընթացը՝ օրենքի կանխատեսելիության պահանջի պահպանման անհրաժեշտության հաշվառմամբ:	օրենքով, գնահատման ստանդարտներով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված գնահատման գործողությունների ամբողջությունն է.»: Ինչ վերաբերում է գնահատման օբյեկտի արժեքի տեսակին, ապա պետք է նշենք որ համաձայն գործող ՀՍՏ 252-2012 ստանդարտի և միջազգային տարատեսակ ստանդարտների սահմանված են շուկայական արժեքից տարբերվող մի շարք արժեքների գնահատում, ինչպես նաև նախագծով նոր խմբագրված 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն գնահատվող արժեքի տեսակն որոշում է պատվիրատուն:	

3.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Գնահատման հաշվետվություն՝ փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկություն սույն օրենքով, գնահատման ստանդարտներով եւ Ընդունվել է: օրենսդրությամբ սահմանված կարգով որեւէ ամսաթվի դրությամբ որոշված գնահատման օբյեկտի արժեքի վերաբերյալ.»: Գնահատման հաշվետվության հասկացությունը սահմանելիս «որեւէ ամսաթվի դրությամբ» ձեւակերպումն անորոշ է՝ գնահատման օբյեկտի՝ ո՞ր օրվա դրությամբ որոշված արժեքի վերաբերյալ տեղեկատվություն պետք է պարունակի հաշվետվությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ «Գնահատման առաջադրանք՝ պատվիրատուի կողմից գնահատողին ներկայացվող առաջադրանք, որտեղ արտացոլվում են գնահատվող օբյեկտի նույնականացման տվյալները, գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաեւ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գնահատման նպատակը, գնահատման գործառույթը եւ գնահատվող օբյեկտի իրավունքների տեսակը.»: Այս դեպքում, մասնավորապես, անհասկանալի է՝ ի՞նչ իրավունքների մասին է խոսքը, բացի այդ ոչ բավարար հստակությամբ ձեւակերպման պարագայում ստացվում է, որ քննարկվող իրավունքները պատկանում են գնահատվող օբյեկտին: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք վերախմբագրել ընդգծված հատվածը՝ ապահովելով համապատասխանությունը որոշակիության սկզբունքին:		
5.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի մի շարք այլ հոդվածների ոչ բավարար հստակությամբ ձեւակերպմանը: Օրինակ՝ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը հաշվառման նպատակով լիազոր մարմնին դիմելիս պետք է ներկայացնեն գնահատողի գործունեության մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի պատճենը: Օրենքի կանխատեսելիությունն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ապահովելու տեսանկյունից, կարծում ենք, որ անհրաժեշտություն կա բացահայտելու տվյալ փաստաթղթի էությունը:		
6	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության սկզբունքը՝ ինքնակարգավորվող կազմակերպությունների առավելագույն անկախությունը պետական մարմիններից, (...), անորոշ է «առավելագույն» եզրույթի գնահատողական լինելու տեսանկյունից: Մասնավորապես՝ անհասկանալի է՝ արդյոք որոշ դեպքերում պետական մարմինները կամ պատվիրատուները կարող են որոշակի կառուցակարգերով ազդեցություն ունենալ ինքնակարգավորվող կազմակերպության անկախության վրա:	Ընդունվել է մասամբ: Օրենսդրական միասնական կարգավորումը ապահովելու նպատակով և հաշվի առնելով ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքների 2.2 կետում նշված եզրակացությունը Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում «իր գործունեության մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի պատճենը» բառերը փոխարինվել են «սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված ապահովագրության վկայագրի պատճենը» բառերով: Այս փաստաթղթերի	Ընդունվել է մասամբ:

				բովանդակությունը բացահայտելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ ապահովագրության հետ կապված հարաբերությունները արդեն իսկ կարգավորված են օրենսդրությամբ: Միևնույն ժամանակ ապահովագրության դաս չի սահմանվում, դրա որոշման հնարավորությունը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում որոշելու համար:	
7	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում կիրառված է «գնահատման գործունեություն իրականացնող անձ» արտահայտությունը: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համաձայն՝ «Գնահատման կազմակերպություն՝ գնահատման գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը սույն օրենքով սահմանված կարգով հաշվառված է լիազոր մարմնի կողմից.»: Քննարկվող օրենքի տրամաբանությունից բխում է, որ գնահատման գործունեություն իրականացնող անձը գնահատման կազմակերպությունն է: Հետեւաբար՝ առաջարկում ենք միեւնույն միտքն արտահայտելիս կիրառել միեւնույն բառերը՝ հաշվի առնելով գնահատման կազմակերպության սահմանումը հասկացությունների շարքում, ինչպես նաեւ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:		
8	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 5-րդ հոդվածում սահմանված է «Սույն օրենքի իմաստով գնահատման գործունեության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սուբյեկտ են համարվում սույն օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառված գնահատման կազմակերպությունները, գնահատողները, ինչպես նաեւ պատվիրատուները»: Վերոնշյալ կարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ լիազոր մարմնի կողմից հաշվառված լինելու փաստը կրկին նշելու անհրաժեշտությունը բացակայում է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված է գնահատման կազմակերպության հասկացությունը, որի համաձայն՝ «Գնահատման կազմակերպություն՝ գնահատման գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը սույն օրենքով սահմանված կարգով հաշվառված է լիազոր մարմնի կողմից.»:		
9	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գնահատման ստանդարտները՝ գնահատման անցկացման, ինչպես նաեւ գնահատման գործընթացի համար	Ընդունվել է:	Ընդունվել է:

			անհրաժեշտ հարակից ծառայությունների իրականացման մեթոդներն ու կարգը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերն են: 2. Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաեւ գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ գնահատման միջազգային ստանդարտներին ու վարքագծի կանոններին համահունչ, որի կիրառումը պարտադիր է գնահատողների կողմից»: Հարկ է նկատել, որ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում արդեն իսկ սահմանված է «գնահատման ստանդարտ» հասկացությունը: Տվյալ պարագայում հակասություն է առաջանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված պահանջի հետ, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները եւ ներքին հակասությունները»: Ուստի առաջարկում		

			ենք բացառել միեւնույն հասկացության առնչությամբ տարաբնույթ սահմանումների առկայությունը, ինչպես նաեւ նորմերի անհիմն կրկնությունները: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ օրինակ՝ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի «գնահատման ստանդարտների սահմանումն ու դրանց կիրառումը» վերտառությամբ 7-րդ հոդվածում նախատեսված չեն այն տվյալները, որոնք պետք է պարունակեն գնահատման ստանդարտները, մինչդեռ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում գնահատման ստանդարտներին վերաբերելի նվազագույն պայմանները բացահայտված են: Կարծում ենք՝ քննարկվող պայմանները նպատակահարմար է նախատեսել Օրենքում:		
10	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հաշվառման ծրագիր մուտք գործելու համար նախատեսված մուտքանունը եւ գաղտնաբառը կազմակերպության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ղեկավարին ու գնահատողին տրամադրվում է լիազոր մարմնի կողմից»: Իրավական որոշակիության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք ՝ հիմք ընդունելով Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված հասկացությունը:		
11	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է՝ «Գնահատման պատվերի համար իրավական հիմք է գնահատման կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որը պարունակում է գնահատման առաջադրանքը»: Կարծում ենք՝ «, որը պարունակում է գնահատման առաջադրանքը» ձեւակերպման անհրաժեշտությունը բացակայում է հետեւյալ հիմնավորմամբ՝ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 11-րդ հոդվածում սահմանված են պայմանագրի էական պայմանները, որոնց շարքում է նաեւ գնահատման	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առաջադրանքի վերաբերյալ տեղեկությունները: Հետեւաբար՝ անհիմն կրկնությունից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, որը պարունակում է գնահատման առաջադրանքը» ձեւակերպումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ «Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները եւ ներքին հակասությունները»:		
12	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում գնահատման կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ կնքված պայմանագրին տրվել է կրճատ տարբերակ՝ «(այսուհետ՝ Պայմանագիր)»: Հարկ է նկատել, որ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի տեքստում «գնահատման կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ կնքված պայմանագիր» երկար արտահայտության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համար սահմանված կրճատ տարբերակից հետո կիրառված է նաեւ «պայմանագիր» ձեւը: Առաջարկում ենք «գնահատման կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ կնքված պայմանագիր» երկար արտահայտության համար կրճատ տարբերակի սահմանումից հետո կիրառել միայն սահմանված կրճատ տարբերակը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը»:		
13	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է՝ «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումները եւ դրան կից փաստաթղթերը լիազոր մարմին մուտք	Ընդունվել է:	Ընդունվել է:

			լինելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը ուսումնասիրում է դրանք եւ կայացնում որոշում՝ իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը հաշվառելու կամ հաշվառման դիմումը մերժելու վերաբերյալ: Դիմումը եւ կից փաստաթղթերը վերադարձվում է, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են: Փաստաթղթերում առկա թերությունները վերացնելու համար լիազոր մարմինը տրամադրում է եռօրյա ժամկետ, որը հաշվարկվում է դիմողի կողմից փաստաթղթերը ստանալու օրվանից: Եռօրյա ժամկետում թերությունները վերացվելու եւ լիազոր մարմին կրկին ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է ներկայացված այն սկզբնապես ներկայացվելու օրը»: Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվառվելու նպատակով լիազոր մարմնին ներկայացված դիմումներում եւ կից փաստաթղթերում թերությունների վերացման համար տրամադրվող եռօրյա ժամկետի սահմանումը, կարծում ենք, խնդրահարույց է, քանի որ ոչ		

			աշխատանքային օրերի ընթացքում համապատասխան իրավաբանական անձը եւ անհատ ձեռնարկատերը հնարավորություն չի ունենա լիազոր մարմնին եռօրյա ժամկետում կրկին ներկայացնել փաստաթղթերը: Ուստի, առաջարկում ենք թերությունների վերացման համար նախատեսված «եռօրյա» ժամկետը փոխարինել «երեք աշխատանքային օր» ժամկետով: Նույնական դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում սահմանված «երեք օրվա ընթացքում» ժամկետին:		
14	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի մի շարք հոդվածներում, ի տարբերություն գործող Օրենքում նախատեսված իրավանորմերի, բացակայում են էական հարցերի վերաբերյալ կարգավորումները՝ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ կատարվող փոփոխությունների անհրաժեշտության մասին նշում կատարված չլինելու պայմաններում: Օրինակ՝ Նախագծի 1-ին հոդվածով նոր	Ընդունվել է:	Ընդունվել է:

			խմբագրությամբ շարադրվող Օրենքի 11-րդ հոդվածով պայմանագրի էական պայմանները նախատեսելիս, ի տարբերություն գործող Օրենքի 10-րդ հոդվածի, ներառված չեն մի շարք պայմաններ: Սակայն, մասնավորապես, գույքի գնահատման ամսաթվի եւ տարեթվի պայմանի վերաբերյալ պայմանագրում նշում կատարելը, կարծում ենք, որ կարեւոր է գույքի արժեքի վերաբերյալ տեղեկատվության որոշակիացման՝ կոնկրետ ամսաթվի դրությամբ տվյալ արժեքի ֆիքսված լինելը հավաստելու տեսանկյունից: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում գնահատման հաշվետվությունում ներառվող տվյալների թույլատրելիության դեպքերը քննարկելիս, ի տարբերություն գործող Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի, նշում կատարված չէ գույքի գնահատմամբ որոշված արժեքը համարժեք դրամով արտահայտելու պահանջի մասին: Նշված փոփոխության կատարումը, կարծում ենք, որ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի Օրենսգրքի 142-րդ հոդվածով որդեգրված մոտեցման		

			համատեքստում, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում դրամական միավորը Հայաստանի Հանրապետության դրամն է, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա արժույթի օգտագործման դեպքերը նախատեսված են ընդհանուր կանոնից՝ իբրեւ բացառություն:		
15	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածում նախատեսված է հետեւյալը՝ «Հաշվետվության տվյալների վիճահարույց լինելը 1. Գնահատման հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, գործող ստանդարտներին համապատասխանության խնդիրները կարող են պարզաբանվել լիազոր մարմնի կողմից՝ վերջինիս ուղղված գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի կամ շահառուների դիմումի հիման վրա, կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, իսկ դրանց վերաբերյալ վեճերի առկայության դեպքում՝ դատական կարգով: 2. Լիազոր մարմնի նախաձեռնությամբ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը եւ կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Մեջբերվածի կապակցությամբ նշենք հետեւյալը՝ 1) Գնահատման գործունեության սուբյեկտների կամ շահառուների կողմից դիմումներ ներկայացնելու ընթացակարգը քննարկվող հոդվածում բացահայտված չէ: Սակայն տվյալ ընթացակարգի արտացոլումն Օրենքում, կարծում ենք, որ անհրաժեշտ է իրավական որոշակիության սկզբունքի պահպանման տեսնկյունից, մասնավորապես՝ համապատասխան սուբյեկտներին տվյալ իրավակարգավորման հետ իրենց վարքագիծը համադրելու հնարավորություն ընձեռելու առումով: 2) Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Լիազոր մարմնի նախաձեռնությամբ գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը եւ կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին»		

			օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաեւ՝ (□) 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը»: Հարկ է նկատել, որ Կառավարության կողմից գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերի սահմանման համար ժամկետ անցումային դրույթներով նախատեսված չէ: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը՝ առաջարկում ենք անցումային դրույթում սահմանել Կառավարության կողմից գնահատման հաշվետվությունների		

			ուսումնասիրության դեպքերի նախատեսման համար ժամկետ: 3) Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետեւյալը. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածի վերնագրից՝ հաշվետվության տվյալների վիճահարույց լինելը, բխում է, որ նույն հոդվածով կարգավորվող դեպքերը վերաբերելի են վիճահարույց դեպքերին: Հարկ է նկատել, որ Լիազոր		

			մարմնի նախաձեռնությամբ գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը, որոնք ենթադրյալ պետք է լինեն վիճելի դեպքեր, չեն պարունակում վիճարկման տարր, այն է՝ գնահատման գործունեության սուբյեկտների կամ շահառուների դիմումով վիճարկվող հարց: Միաժամանակ, Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածը չի պարունակում կարգավորում, որը հնարավորություն կտա որոշակիացնելու քննարկվող դեպքերը վիճահարույց համարելու չափանիշները, ինչից իրավաչափորեն կբխեր Լիազոր մարմնի նախաձեռնությամբ ուսումնասիրության անցկացումը: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում նշում է կատարվում, որ Լիազոր մարմնի նախաձեռնությամբ գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը եւ կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հարկ է նկատել, որ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝		

			Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Հիմք ընդունելով եզրակացության սույն կետում մեջբերված իրավական նորմերը եւ կատարված դիտարկումները՝ կարծում ենք, որ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը խնդրահարույց է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից, մասնավորապես՝ լիազորող նորմը չի բավարարում իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին:		
16	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվում է «եւ (կամ)» ձեւակերպումը: Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող	Ընդունվել է:	Ընդունվել է:

			է կիրառվել կա՞մ «եւ», կա՞մ «կամ» շաղկապը, միչդեռ «եւ (կամ)» գրելաձեւը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք վերանայել քննարկվող ձեւակերպման կիրառությունը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում կիրառված «եւ (կամ)» գրելաձեւին: Միաժամանակ, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում ուղղել վրիպակը՝ հանել «կամ սեփականատեր» բառերը:		
17	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում «գնահատողի մասնագիտական որակավորում» հասկացությանը տրվել է կրճատ տարբերակ՝ «(այսուհետ՝ Որակավորում)»: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը:», առաջարկում ենք «գնահատողի մասնագիտական որակավորում» հասկացության կրճատ տարբերակը սահմանել առաջին կիրառումից հետո, որից հետո կիրառել միայն սահմանված կրճատ տարբերակը:		
18	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում կիրառված է «խախտում (խախտումներ)» ձեւակերպումը: Կարծում ենք՝ փակագծում խախտում բառի հոգնակի ձեւի սահմանման անհրաժեշտությունը բացակայում է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաեւ այդ բառի հոգնակիի վրա եւ ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

19	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ գլուխը վերնագրված է «ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»: Մինչդեռ, Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ գլուխում ներառված են նաեւ Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն վերտառությամբ 24-րդ հոդվածը, Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը անդամակցելու հայտի մերժման եւ անդամակցությունը դադարեցնելու դեպքերը վերտառությամբ 28-րդ հոդվածը, ինչպես նաեւ Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը լիազոր մարմնում հաշվառումից հանելու դեպքերը վերտառությամբ 29-րդ հոդվածը: Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ գլուխի վերնագիրը համապատասխանեցնել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասը՝ «Նորմատիվ իրավական ակտի բաժիններն ու գլուխները համարակալվում են արաբական թվանշաններով: Բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը: Գլուխների եւ բաժինների վերնագրերը գրվում են մեծատառերով, եւ վերնագրերի վերջում որեւէ կետադրական նշան չի դրվում»:		
20	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասում կիրառված «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ»: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 1-ին հոդվածով նոր	Ընդունվել է:	Ընդունվել է:

			խմբագրությամբ շարադրվող Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում կիրառված «ՀՀ» հապավմանը:		
21	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 8-րդ կետերով գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության համար նախատեսված գործառույթներն առաջարկում ենք վերանայել՝ խմբագրման արդյունքում ապահովելով համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
22	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի մի շարք հոդվածներում, օրինակ՝ 14-րդ հոդվածի 1-ին մասում, 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, կիրառված է «գործող ստանդարտներ» ձեւակերպումը, մինչդեռ Նախագծում օգտագործվող հիմնական հասկացությունների հատվածում բացահայտված է «գնահատման ստանդարտ» եզրույթը, ինչն էլ կիրառված է Նախագծի հոդվածների զգալի մասում: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք բացառել միեւնույն միտքն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			արտահայտելիս տարբեր բառերի կիրառումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի ամբողջ տեքստում կիրառվում են «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» եւ «օրենսդրությամբ» ձեւակերպումները: Առաջարկում ենք միեւնույն միտքն արտահայտելիս կիրառել միեւնույն ձեւակերպումը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետում կիրառված «գնահատման սուբյեկտներ» եզրույթին:		
23	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի կետերի համարակալումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները, մասերը եւ կետերը համարակալվում են արաբական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով»:		
24	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝ 1) նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները. 2) գործողության ժամկետները, երբ նորմատիվ իրավական ակտը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ): Այս դեպքում նշվում է ակտի կամ դրա առանձին մասի գործողության հստակ ժամկետը»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական այն ակտը, որով ուժի մեջ մտնելու ժամկետ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը»: Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32-րդ հոդվածում սահմանված եզրափակիչ մասը՝ ուժի մեջ մտնելու ժամկետը, սահմանել Նախագծի 2-րդ հոդվածով: Միաժամանակ, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով սահմանել նաեւ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 31-րդ հոդվածում սահմանված անցումային դրույթները: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Հոդվածների վերնագրերի վերջում որեւէ կետադրական նշան չի դրվում: Հոդվածի մասերը, կետերը եւ ենթակետերը վերնագիր չեն ունենում»: Հարկ ենք համարում նշել, որ Նախագծի		

			1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 31-րդ հոդվածի վերանգիրը չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը, քանի որ քննարկվող հոդվածով նախատեսված են միայն անցումային դրույթներ: Ինչպես նաեւ հարկ է նկատել, որ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 32-րդ հոդվածը վերնագրված չէ:		
25	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Ֆինանսատնտեսագիտական եւ կազմակերպական հիմնախնդիրների տեսանկյունից հարկ ենք համարում ներկայացնել հետեւյալ նկատառումները, դիտողություններն ու առաջարկությունները: Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում, որպես գնահատման կազմակերպության հաշվառման պայման, նշվում է նաեւ «մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի պատճենի» ներկայացման պահանջը, որը ներկայումս ուղղակի անհնար է կատարել: Խնդիրն այն է, որ ապահովագրության ոլորտը կանոնակարգող՝ «Ապահովագրության եւ	Ընդունվել է մասամբ:	Ընդունվել է մասամբ:

			ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով «մասնագիտական պատասխանատվության ապահովագրության» դաս սահմանված չէ, ուստի ապահովագրական ընկերությունները նման ապահովագրություն չեն կարող իրականացնել եւ նման անվանումով ապահովագրության վկայագիր չեն կարող տրամադրել: Այս կապակցությամբ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պահանջը փոխարինել համապատասխան ապահովագրության դասով, օրինակ՝ վերը հիշատակված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ոչ կյանքի պահովագրության 13-րդ կետով նախատեսված՝ «ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասով (պատասխանատվության բոլոր այն տեսակները, որոնք ներառված չեն օրենքի տվյալ մասի 10-12-րդ կետերով նախատեսված դասերում) կամ 16-րդ կետով նախատեսված՝ «ֆինանսական		

			վնասների ապահովագրություն, որոնք առաջանում են շուկայական արժեքի կորստից կամ ֆինանսական կորուստների այլ ձեւերից» դասով: Հաշվի առնելով գնահատման գործունեության բնույթը՝ ավելի նպատակահարմար կլինի կիրառել նշված երկրորդ տարբերակը, որի կապակցությամբ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի «իր գործունեության մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի պատճենը» բառերը փոխարինել «գնահատման արդյունքում հաճախորդներին կամ երրորդ անձանց հասցված ֆինանսական վնասների ապահովագրության վկայագրի պատճենը» բառերով:		

26	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հռիփսիմե Ստամբուլյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ գնահատման կազմակերպությունն իրավունք ունի «պատվիրատուի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու եւ պայմանագրով նախատեսված պայմանների խախտման դեպքում հրաժարվել գնահատման իրականացումից», իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանվում է, որ գնահատողը պարտավոր է «հրաժարվել գնահատման իրականացումից, եթե գնահատման օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ սույն օրենքով եւ գնահատման ստանդարտներով սահմանված պարտադիր պահանջների պահպանմամբ գնահատման հաշվետվություն կազմելու համար»: Այսինքն՝ այն դեպքում, երբ գնահատման կազմակերպությունը եւ գնահատողը նույն անձն են (այսինքն՝ գնահատման կազմակերպությունն անհատ ձեռնարկատեր հանդիսացող գնահատող է), ստացվում է, որ գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայության կամ դրա թերի լինելու հիմքով գնահատման կազմակերպությունը միաժամանակ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			իրավունք ունի եւ պարտավոր է հրաժարվել գնահատման իրականացումից: Սակայն, խնդիրը կայանում է նրանում, որ եթե գնահատման կազմակերպությունը նշված դեպքում իրավունք ունի հրաժարվել գնահատման իրականացումից, ապա նա իրավունք ունի նաեւ չօգտվելու իր այդ իրավունքից եւ չնայած անհրաժեշտ տեղեկատվության չստացմանը՝ շարունակի կատարել գնահատման գործընթացը: Լրացուցիչ կարգավորման կարիք ունի նաեւ այն դեպքը, երբ գնահատման կազմակերպության գնահատողներից մեկը, օրինակ, գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայության կամ դրա թերի լինելու հիմքով հրաժարվում է գնահատման իրականացումից, իսկ գնահատման կազմակերպությունը նույն առաջադրանքը հանձնարարում է իր գնահատողներից մեկ ուրիշին, որն էլ, չնայած տեղեկատվության հետ կապված խնդիրներին, իրականացնում է օբյեկտի գնահատումը: Հետեւաբար՝ Նախագծով անհրաժեշտ է կամ կարգավորել նշված դեպքերը՝ բնականաբար այդ դեպքերում գնահատման կազմակերպության կամ		

			գնահատողի վրա դնելով առնվազն հաճախորդին կամ երրորդ անձանց գնահատման արդյունքում հասցված վնասների փոխհատուցման ռիսկը, կամ էլ կարելի է նաեւ հանել Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ նշված հիմքով գնահատման իրականացումից հրաժարվելու մասին դրույթը՝ ինչպես գնահատման կազմակերպության, այնպես էլ գնահատողի համար սահմանելով որպես պարտականություն:		
27	ՀՀ կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Որակավորումը կազմակերպում եւ իրականացնում է լիազոր մարմինը՝ որակավորման քննությունների միջոցով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
28	ՀՀ կառավարություն	Նոր Նախագիծ	Օրենքի Նախագծերի փաթեթին ավելացվել է նոր՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Ընդունվել է:	Ընդունվել է: